

## ԿԱՐԾԻՔ

### ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԸՆԴԴԻՄԱԽՈՍԻ

Մանիկ Մերուժանի Գրիգորյան «Ծառաբույսերի պարտիզային ձևերի ներմուծման և հարմարվողականության առանձնահատկությունները Հայաստանի բուսաբանական այգիներում» թեմայով ատենախոսության վերաբերյալ ներկայացված Գ.00.05 «Բուսաբանություն, սնկաբանություն, էկոլոգիա» մասնագիտությամբ կենսաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար

Հայաստանում ներկայիս պայմաններում կանաչապատման մեջ օգտագործվում է դենդրոֆլորայի սակավաթիվ գեղազարդ տեսակային կազմ: Գեղազարդ պարտիզային ձև ունեցող ծառաբույսերը հիմնականում ներմուծվում են: Ժամանակի ընթացքում այդ ծառաբույսերի որոշ մասը ոչնչանում է, քանի որ ներմուծելիս հաշվի չի առնվում դրանց հարմարվողականությունը Հայաստանի պայմաններում: Աշխատանքը բացահայտում է ծառաբույսերի պարտիզային ձևերի ներմուծման և հարմարվողականության առանձնահատկությունները Հայաստանի պայմաններում:

Մանիկ Գրիգորյանի թեկնածուական ատենախոսությունը կազմված է ներածությունից, 6 գլուխներից, եզրակացություններից, գործնական առաջարկներից և գրականության ցանկից:

Ներածության մեջ ներկայացված են թեմայի արդիականությունը, նպատակը և խնդիրները, գիտական նորույթը, տեսական և կիրառական նշանակությունը, ապրոբացիան:

Առաջին գլխում նկարագրված է ծառաբույսերի պարտիզային ձևերի ծագումնաբանությունը:

Էջ 16-ից 20-ում մանրամասն բացատրվում է տեսակին և պարտիզային ձևերին վերաբերվող տերմինները, որոնք օգտագործվել են տարբեր գիտնականների կողմից սկսած 18-րդ դարից մինչ այսօր:

Գլուխ 2-ը նկարագրում է Երևանի, Վանաձորի, Սևանի բուսաբանական այգիների կլիմայական պայմանները՝ կապված ծառաբույսերի ներմուծման և կլիմայավարժեցման հետ: Այդ գլխում բերվում են տեղեկություններ բուսաբանական այգիների հողային պայմանների վերաբերյալ և տեղադրությունները՝ ըստ ծովի

մակերևութից բարձրության: Տրվում են տեղեկություններ օդի միջին ջերմաստիճանի, ամսական տեղումների վերաբերյալ, որոնք ներկայացված են նաև աղյուսակների և գրաֆիկական պատկերների միջոցով: Արված են հետևություններ, թե այդպիսի տարբեր պայմաններում ինչպիսի պարտիզային ձևեր կարելի է աճեցնել:

Կլիմայական պայմանների տվյալները բերված են 1971, 1976 և 2016-2017 թվականների վերաբերյալ: Լավ կլիմեր հեղինակը ամփոփեր նաև, թե այդ 40-45 տարիների ընթացքում տվյալ վայրերում ինչ կլիմայական փոփոխություններ են տեղի ունեցել:

Գլուխ 3-ում նկարագրված է հեղինակի կողմից հետազոտված նյութը և մեթոդիկան:

Նկարագրվել է պարտիզային ձևերի տեսակային կազմի հարստացման համար կատարված ցանքսի և կտրոնավորման աշխատանքների, ընձյուղային համակարգի մորֆոանատոմիական ուսումնասիրությունների, բողբոջների կազմի և ընձյուղների անատոմիական կառուցվածքի ուսումնասիրությունների, ներմուծված և հանրապետությունում աճող պարտիզային ձևերի գեղագարդության ցուցանիշների գնահատման մեթոդները:

Էջ 33-ում նշվում է, որ սերմեր ստացվել են արտերկրներից, այդ թվում Միչիգանից: Գուցե պետք էր նշել, որ ԱՄՆ-ի Միչիգան նահանգից: Նույնը 77 էջում:

Գլուխ 4-ը կազմված է 2 ենթագլուխներից և նկարագրում է ծառաբույսերի տաքսոնոմիական բազմազանությունը համաշխարհային դենդրոֆլորայում և դրա ներկայացվածությունը Հայաստանի բուսաբանական այգիներում:

Ենթագլուխ 4.1-ում նկարագրվում է ծառաբույսերի պարտիզային ձևերի առկայությունը համաշխարհային դենդրոֆլորայում:

Իսկ ենթագլուխ 4.2-ում նկարագրվում է Երևանի, Վանաձորի, Սևանի բուսաբանական այգիներում ներմուծված ծառաբույսերի պարտիզային ձևերի տաքսոնոմիական կազմը, պարտիզային ձևեր պարունակող ընտանիքների տոկոսային բաշխվածությունը: Բերվում են 1963-1985թթ.-ների և 2020 թվականի համեմատական տվյալներ:

Աշխատանքը արժեքավոր է նրանով, որ պարտիզային ձևերի գիտական գույքագրումը կատարվել է 3 իրարից շատ տարբեր կլիմայական գոտիներում գտնվող բուսաբանական այգիներում, ինչը տալիս է հարուստ և բազմազան նյութեր, որոնք կարելի է օգտագործել կանաչ շինարարության մեջ Հայաստանի տարբեր կլիմայական գոտիներում:

4-րդ գլխի շարադրանքը ավելի պատկերավոր և հասկանալի է դառնում աղյուսակների և գծագրական պատկերների միջոցով տվյալների ներկայացման շնորհիվ:

Գլուխ 5-ում նկարագրվում է ծառաբույսերի պարտիզային ձևերի կենսաէկոլոգիական առանձնահատկությունները Երևանի բուսաբանական այգում: Գլուխ 5-ը կազմված է 3 ենթագլուխներից:

Ենթագլուխ 5.1-ում նկարագրվում է պարտիզային ձևերի սեզոնային աճի, զարգացման դինամիկան և գեղագարդության դրսևորման առանձնահատկությունները Երևանի բուսաբանական այգում:

Էջ 66-ի 16 աղյուսակում և տեքստի հաջորդ 68 էջում տրվում են հապավումներ՝ ՎՎ, ՎՍ, ՍՈԻ և այլն: Լավ կլիներ, որ առանձին բացվեր բոլոր հապավումները, տեքստը ավելի հեշտ ընկալելու համար:

Հետաքրքիր կլիներ, եթե սեզոնային աճի, զարգացման դինամիկայի ուսումնասիրությունները կատարվեին ոչ միայն Երևանի, այլ նաև Վանաձորի և Սևանի բուսաբանական այգիներում, ինչը կտար լրացուցիչ տվյալներ համեմատական վերլուծություններ կատարելու համար:

Ենթագլուխ 5.2-ում նկարագրված է պարտիզային ձևերի բազմացման առանձնահատկությունները Երևանի բուսաբանական այգու պայմաններում:

Հեղինակը, ծառաբույսերի պարտիզային ձևերը բազմացնելով կտրոններով և սերմերով, ստացել է շատ կիրառելի արդյունքներ, սակայն լավ կլիներ, որ այդ փորձերը կատարվեին, ինչպես վերևում նշվել է, ոչ միայն Երևանի բուսաբանական այգում:

Ենթագլուխ 5.3-ում նկարագրված է երկու պարտիզային ձևերի անատոմիական կառուցվածքի առանձնահատկությունները:

Էջ 90, նկար 17-ի վերնագրի մեջ չի նշվել, թե մանրադիտակային նկարը քանի անգամ մեծացումով է, նույնը նկար 18-ում:

Էջ 92-ի ներքևից 4-րդ տողում օգտագործվել է «շիզոգեն խոռոչներ» տերմինը, գուցե հեղինակը ի նկատի ուներ «սիֆոգեն գետեղարանները» (Схизогенные (от др.-греч. σχίζω — разделять) вместилища): Նույնը էջեր 95, 96, 97, 99-ում և այլ էջերում:

Էջ 95-ի վերևից 12-րդ տողում օգտագործվել է «օքսիբլաստ» տերմինը, գուցե հեղինակը ի նկատի ուներ «աուքսիբլաստ» հասկացությունը («ауксибласт» — побег с хорошо выраженными междоузлиями): Նույնը 102 էջում:

Ենթագլուխ 5.3-ում ներկայացվող նյութը ավելի ընկալելի կլիներ, եթե հեղինակը ստացված տվյալները ներկայացներ նաև աղյուսակի կամ գծապատկերի տեսքով:



Գլուխ 6-ում ներկայացված է ծառաբույսերի պարտիզային ձևերի հարստացման և նպատակային օգտագործման հեռանկարները հանրապետության կանաչապատման պրակտիկայում: Մանրամասն նկարագրվում է պարտիզային ձևերի խմբավորումը ըստ սաղարթի ձևի և նպատակային օգտագործման:

Էջ 111-115-ի աղյուսակ 21-ում տրվում է 50 ծառաբույսերի պարտիզային ձևերի օգտագործման հեռանկարները կանաչապատման տարբեր հորինվածքային ձևավորումներում: Եթե այս աղյուսակում ավելացվեր թե Հայաստանի որ կլիմայական գոտիներում կարելի է օգտագործել այդ պարտիզային ձևերը, ապա այս աղյուսակը կդառնար շատ ավելի կիրառելի, հատկապես կանաչապատման աշխատանքներով զբաղվողների համար:

Էջ 130-ի նախագծի վրա նշված չեն հարավ-հյուսիս ուղղությունները, նաև ծովի մակերևույթից բարձրությունների ցանցը նախագծվող տարածքի համար, որը պատկերացում կտար տարբեր ժամերին արևի դիրքի և լանդշաֆտի ռելիեֆի մասին: Նշված չէ նաև մասշտաբը: Պայմանական նշանները սովորաբար վերցվում են պետական ստանդարտից (ГОСТ):

Էջ 132-ի տնկանյութի ձեռքբերման ծախսերի նախահաշվում (աղյուսակ 23) չի բերվում տվյալներ տնկանյութի տարիքի և բարձրության վերաբերյալ, որի հետ կապված գինը տատանվում է: Իմ տեսակետից, այդ աղյուսակում 2-րդ սյունակը ավելորդ է: 3-րդ սյունակի գլխավերևում կարելի էր գրել «Քանակը (հատ)»:

Ատենախոսության 6 եզրակացությունները լիովին համապատասխանում են կատարված հետազոտության արդյունքներին: Հեղինակը ներկայացրել է նաև կիրառական գործնական առաջարկներ Հայաստանում, կանաչապատման մեջ 50 պարտիզային ձևերի ծառաբույսերի օգտագործման վերաբերյալ:

Գրականության ցանկը համապատասխանում է ԲՈԿ-ի կողմից ընդունված ստանդարտներին:

Աշխատանքում առկա են մի քանի տեխնիկական վրիպակներ:

Ատենախոսության սեղմագիրը լիորեն արտահայտում է աշխատանքի բովանդակությունը:

Իմ կողմից նշված թերությունները հիմնականում կրում են խմբագրական կամ խորհրդատվական բնույթ և ոչ մի կերպ չեն նվազեցնում սույն աշխատանքի կարևորությունը, արժեքը, արդիականությունը և անհրաժեշտությունը: Առավել ևս, որ Հայաստանի բնակավայրերի կանաչապատ տարածքների այսօրվա տազնապալի վիճակից դուրս գալու համար Մանիկ Գրիգորյանի կողմից կատարված և նմանատիպ այլ աշխատանքների անհրաժեշտությունը շատ մեծ է: Աշխատանքում

